

## ՀԱԳՄՉ 12.20

Առաջին հրատարակություն  
23 դեկտեմբերի 2003թ.  
Ներառում է փոփոխություններ 1, 2 և 3-ը

## Ականների վտանգի մասին իրազեկման ծրագրերի իրականացում

Տնօրեն,  
ՄԱԿ-ի Ականագերծման ծառայություն (ՄԱԿԱԾ),  
2 United Nations Plaza, DC2-0650  
New York, NY 10017  
USA

Էլ. Փոստ՝ [mineaction@un.org](mailto:mineaction@un.org)  
Հեռախոս՝ (1 212) 963 1875  
Ֆաքս՝ (1 212) 963 2498  
Կայքէջ՝ [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org)

## Նախագրուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/> կամ ՄԱԿԱՄ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>):

## Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱՄ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն  
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱՄ)  
2 United Nations Plaza, DC2-0650  
Նյու Յորք, NY 10017  
ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org  
Հեռախոս՝ (1 212) 963 1875  
Ֆաքս՝ (1 212) 963 2498

## Բովանդակություն

Նախաբան .....	iv
Ներածություն .....	v
Ականների վտանգի մասին իրազեկման ծրագրերի իրականացում .....	1
1. Ծավալ.....	1
2. Փաստաթղթեր .....	1
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ .....	1
4. Ծրագրի իրականացում .....	2
5. Ականների վտանգի մասին իրազեկման (ԱՎԻ) տարբեր միջոցառումների իրականացում .....	3
5.1. Հանրային տեղեկատվության տարածում .....	3
5.2. Ուսուցում և վերապատրաստում .....	3
5.3. Ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցություն .....	5
6. Իրականացման համատեքստ .....	6
7. Ուղղորդող սկզբունքներ .....	6
7.1. Շահառուների ներգրավում .....	6
7.2. Համակարգում .....	6
7.3. Ինտեգրում .....	6
7.4. Համայնքների մասնակցություն և լիազորություն .....	6
7.5. Տեղեկությունների կառավարում և փոխանակում .....	7
7.6. Պատշաճ հասցեականություն .....	7
7.7. Կրթում .....	7
7.8. Վերապատրաստում .....	8
8. Պարտավորություններ .....	8
8.1. Միացյալ ազգերի կազմակերպություն .....	8
8.2. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ) .....	8
8.3. ԱՎԻ կազմակերպություն .....	9
8.4. Դոնորներ .....	10
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր .....	11
Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ .....	12
Փոփոխությունների գրանցում .....	17

## Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելառճերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

## Ներածություն

Ականների ռիսկի վերաբերյալ կրթական (ԱՎԻ) ծրագրի կամ նախագծի արդյունավետ իրականացումը պետք է ուղղորդվի տվյալների հավաքագրման և կարիքների գնահատման (ՀԱԳՄՉ 08.50) ու պլանավորման (ՀԱԳՄՉ 12.10) չափորոշիչներով, և պետք է արձագանքի վերահսկման և գնահատման արդյունքում ստացված հետադարձ կապին: Ծրագրի բոլոր փուլերի շարքում իրականացման փուլն այն է, որը առավել լավ է արտացոլում ուղղորդման և ճկունության համադրությունը, որը բնորոշ է ՀԱԳՄՉ-ին՝ իրականացնել այն, ինչ պլանավորված է ինչպես ազգային, այնպես էլ կազմակերպությունների մակարդակով, սակայն մնում է բավականաչափ ճկուն՝ հնարավորություն ունենալով արագորեն արձագանքել իրավիճակային փոփոխություններին: Արդյունավետ իրականացման ընթացքում անհրաժեշտ է գործ ունենալ գոյություն ունեցող հասարակական կառույցների և տեղական իշխանությունների հետ, ծրագրի իրականացմանն օժանդակելու տեսանկյունից գնահատել համայնքների ազդեցիկ անդամներին: Արդյունավետ իրականացման ապահովման հիմնական գործոններից մեկն է այլ առաջնային շահառուների հետ գործունեության համակարգման կառուցվածքի սահմանումը:

## Ականների վտանգի մասին իրազեկման ծրագրերի իրականացում

### 1. Ծավալ

Սույն չափորոշիչն ուղղություն է տրամադրում ականների ռիսկի վերաբերյալ կրթական (ԱՎԻ) ծրագրերի և նախագծերի իրականացման համար, ներառյալ ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցման միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն ականազերծող կազմակերպությունների կողմից:

### 2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ հղումները կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղենիշի դրույթների մի մասը:

### 3. Տերմիններ, սահմանումներ և հասկացվումներ

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղենիշների լեզվի հետ:

ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու համար այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն՝ չափորոշիչին ամբողջությամբ բավարարելու համար.

բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար.

գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

“Ականների վտանգի մասին իրազեկում” (ԱՎԻ) տերմինը վերաբերում է այն գործողություններին, որոնք ուղղված են ականների/Պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) հետևանքով առաջացող վնասների ռիսկի նվազեցմանը՝ բարձրացնելով իրազեկության մակարդակը և խթանելով վարքագծի փոփոխությունը, ինչպես նաև իրականացնելով հանրության համար նախատեսված տեղեկատվության տարածումը, կրթումը և վերապատրաստումը և ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցումը:

‘ԱՎԻ կազմակերպություն’ տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը, ներառյալ պետական, հասարակական, քաղաքացիական կազմակերպություններին (օր.՝ կանանց միավորումները, երիտասարդական կազմակերպությունը, կարմիր խաչի և կարմիր մահիկի կազմակերպությունը), առևտրային միավորներին և ռազմական ոլորտի աշխատակիցներին (ներառյալ խաղաղություն պաշտպանող ուժերը), որոնք պատասխանատու են ԱՎԻ ծրագրեր կամ առաջադրանքներ իրականացնելու համար: ԱՎԻ կազմակերպությունը կարող է հանդես գալ որպես հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ: ‘ԱՎԻ ստորաբաժանում’ տերմինը վերաբերում է կազմակերպության առանձին անվանում ունեցող մի բաղադրիչին, որը հավաստագրված է մեկ կամ մի քանի հանձնարարված ԱՎԻ միջոցառումներ իրականացնելու համար, ինչպիսիք են հանրային տեղեկատվության տարածման ծրագրի, դպրոցներում իրականացվող կրթական ծրագրի կամ հակաակնային գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցման ծրագրերի գնահատումը:

«Ականազերծման գործողությունների ազգային մարմին» (ԱԳԱՄ) տերմինը վերաբերում է ականներ ունեցող բոլոր այն երկրների պետական վարչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնք պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները: Դեպքերի մեծ մասում Ականազերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից: Որոշ իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ կամ այլ ճանաչված միջազգային մարմնի համար կարող է անհրաժեշտ և պատշաճ լինել ստանձնել ԱԳԱՄ որոշ կամ բոլոր պարտականությունները և իրականացնել որոշ կամ բոլոր գործառնությունները: Նման դեպքերում ՄԱԿ պետք է համապատասխան տեխնիկական աջակցություն ցուցաբերի, որը կներառի պատշաճ կերպով որակավորված աշխատակիցներին, ովքեր փորձ ունեն ԱՎԻ ոլորտում:

'Նախագիծ' տերմինը վերաբերում է մի միջոցառմանը կամ համակցված միջոցառումների շարքին, որոնք ունեն համաձայնեցված նպատակ: Սովորաբար նախագիծն ունենում է սահմանափակ տևողություն և աշխատանքային ծրագիր: Նպատակին հաջողությամբ հասնելու համար անհրաժեշտ ռեսուրսները սովորաբար սահմանվում և համաձայնեցվում են նախքան ծրագրի մեկնարկը:<sup>1</sup>

'Ծրագիր' տերմինը վերաբերում է կազմակերպության միջին կամ երկարաժամկետ միջոցառումներին, որոնք ուղղված են նրա տեղական կամ ռազմավարական նպատակների իրականացմանը: Հակաականային գործողությունների ծրագիրը բաղկացած է լինում հակաականային գործողությունների՝ միմյանց հետ կապված ծրագրերից: Նմանապես, ԱՎԻ ծրագիրը բաղկացած է լինում միմյանց հետ կապված ԱՎԻ ծրագրերի շարքից:

Սույն չափորոշիչում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է Հավելված Բ-ում: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

#### **4. Ծրագրի իրականացում**

ԱՎԻ ծրագրի հաջող իրականացումը կախված է ԱՎԻ գործիքների և մեթոդների պատշաճ կիրառումից, որոնք անհրաժեշտության դեպքում վերանայվում են փոփոխվող կարիքներն արտացոլելու նպատակով և հիմնված է ԱՎԻ ծրագրերի վերահսկման և գնահատման արդյունքում ստացված հետադարձ կապի վրա:

ԱՎԻ իրականացումը պետք է կատարվի ականազերծման այլ գործողությունների հետ սերտ համագործակցության պայմաններում, և միմյանց հետ սերտորեն աշխատող ականազերծող կազմակերպությունները պետք է միմյանց հետ կապ հաստատեն և տեղեկություններ փոխանակեն իրենց գործողությունների վերաբերյալ: Այս գործունեությունը պետք է իրականացվի ի լրումն ԱԳԱՄ կողմից համակարգվող տեղեկությունների հավաքագրման և տարածման միջոցառումներին:

ԱՎԻ միջոցառումները, հաղորդագրությունները և մեթոդաբանությունները պետք է նպատակային բնակչության ներկայացուցիչների խմբի կողմից փորձարկվեն կամ նախնական թեստավորում անցնեն նախքան ամբողջ ծրագրի իրականացումը:

<sup>1</sup>. Հակաականային գործողությունների ժամանակ նպատակի սահմանման մեթոդը, նպատակին հասնելու միջոցները և անհրաժեշտ ռեսուրսների սահմանումը սովորաբար ներկայացվում են 'ծրագրի առաջարկում' կամ 'ծրագրային փաստաթղթում':

## **5. Ականների վտանգի մասին իրազեկման (ԱՎԻ) տարբեր միջոցառումների իրականացում**

ԱՎԻ իրականացման համար որդեգրված մեթոդները տարբեր կլինեն՝ կախված միջոցառման տեսակից: Ստորև ներկայացված են ԱՎԻ երեք հիմնական բաղադրիչների նկատմամբ կոնկրետ պահանջները:

### **5.1. Հանրային տեղեկատվության տարածում**

Որպես ԱՎԻ մի մաս հանրային տեղեկատվության տարածումը հիմնականում վերաբերում է հանրությանը տեղեկատվության տրամադրման այն միջոցառումներին, որոնք նպատակ են հետապնդում նվազեցնել ականների/ՊՊՄ-ների պատճառով առաջացած վնասների ռիսկը՝ բարձրացնելով ռիսկի վերաբերյալ մարդկանց և համայնքների իրազեկության մակարդակը և խթանելով վարքագծի փոփոխությունը: Այն սովորաբար հանդես է գալիս որպես միակողմանի հաղորդակցում, որն իրականացվում է լրատվամիջոցների կողմից և կարող է ծախսարդյունավետ կերպով և ժամանակին պատշաճ տեղեկություններ և խորհրդատվություն տրամադրել:

Հանրային տեղեկատվության տարածման ծրագրերը կարող են իրականացվել ԱՎԻ ծրագրերից անկախ և հաճախ ականազերծման գործողություններից առաջ: Ընդհարումներից հետո առաջացած անհետաձգելի իրավիճակներում ժամանակի սղության և հավաստի տեղեկությունների բացակայության պայմաններում հանրային տեղեկատվության տարածումը հաճախ լինում է ռիսկի նվազեցման նպատակով անվտանգության վերաբերյալ տեղեկությունների տարածման առավել կիրառելի միջոցը: Նույն կերպ այն կարող է կազմել ականազերծման ծրագրի շրջանակներում ռիսկերի նվազեցման առավել ընդգրկում ռազմավարության մի մասը, որն աջակցություն կցուցաբերի համայնքներում ԱՎԻ անցկացմանը, ականազերծման կամ խորհրդատվական աշխատանքներին:

Կարիքների գնահատման և պլանավորման փուլերը պետք է կապված լինեն լրատվամիջոցների հետ և տեղեկություններ ունենան նպատակային խմբերի՝ ռադիոհաղորդումներ լսելու, հեռուստացույց դիտելու և նորություններ ընթերցելու վարքագծի վերաբերյալ: Սրանք կարող են զգալիորեն տարբերվել ըստ խմբերի և աշխարհագրական տարածքների, և հանրային տեղեկատվության տարածման միջոցառումների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել այդ բոլոր տարբերությունները: Լրատվամիջոցներից բացի հանրային տեղեկատվությունը կարող է տարածվել նաև 'լրատվական փոքր միջոցներով', ինչպիսիք են պաստառները և տեղեկատվական թերթիկները: Նման լրատվամիջոցները կարող են կիրառվել այն տարածքների համար, որոնցում քիչ տարածում ունեն զանգվածային լրատվամիջոցները կամ էլ ի լրումն զանգվածային լրատվամիջոցների կողմից ցուցաբերված մոտեցումներին: Պաստառները և տեղեկատվական թերթիկներն առանձին ունեն սահմանափակ արժեք և պետք է միշտ կիրառվեն ի լրումն առավել լայնածավալ ԱՎԻ ծրագրերին:

### **5.2. Ուսուցում և վերապատրաստում**

ԱՎԻ մեջ 'ուսուցում և վերապատրաստում' տերմինը վերաբերվում է կրթական և վերապատրաստման բոլոր միջոցառումներին, որոնք նպատակ են հետապնդում նվազեցնել ականների/ՊՊՄ-ների պատճառով առաջացած վնասների ռիսկը՝ բարձրացնելով ռիսկի վերաբերյալ մարդկանց ու համայնքների իրազեկության մակարդակը և խթանելով վարքագծի փոփոխությունը: Ուսուցումը և վերապատրաստումը երկկողմանի գործընթաց է որը ներառում է ուսուցանելու և սովորելու միջոցով գիտելիքների, մոտեցումների և պրակտիկայի տրամադրումն ու ստացումը:



Ուսուցումը և վերապատրաստումը կարող են իրականացվել պաշտոնական և ոչ պաշտոնական միջավայրերում: Օրինակ՝ այն կարող է ներառել դպրոցներում ուսուցիչների կողմից երեխաների կրթումը, տան պայմաններում ծնողների կողմից երեխաների և երեխաների կողմից ծնողների կրթումը, երեխայի կողմից այլ երեխայի կրթումը, աշխատավայրում և հանգստյան գոտիներում գործընկերների կրթումը, ականառումների անվտանգության կրթումը մարդասիրական օգնության ոլորտի աշխատակիցների<sup>2</sup> համար և ականառումների ու ՊՊՄ-ների անվտանգության վերաբերյալ հաղորդագրությունների ներառումը Անվտանգության և աշխատանքի հիգիենայի (ԱԱՀ) ընթացիկ գործելառճերում:

Ուսուցման և վերապատրաստման միջոցառումների իրականացումը տարբեր կլինի՝ կախված պլանավորված միջոցառումների տեսակներից: Որոշ կազմակերպություններ դասընթացը կկազմակերպեն համայնքների վրա ուղղակիորեն ներագրելու նպատակով, իսկ մյուսները կհամագործակցեն գործունեությունն իրականացնող գործընկերների հետ՝ նպատակային խմբերի ուսուցումը և վերապատրաստումն անցկացնելու նպատակով: Կրթողների կրթման (ԿԿ) ծրագրի իրականացման ընթացքում ավելի շատ ժամանակ կպահանջի գործընկերների հետ աշխատելու, կրթման, աջակցության և վերահսկման միջոցառումներ իրականացնելու համար:

ԿԿ ծրագրերը տարբերվում են ըստ իրենց բնույթի, իրականացնող գործընկերների և նպատակային խմբերի: ԿԿ ծրագրերը կարող են ներառել.

- ա) դպրոցական ծրագրերի վրա հիմնված կրթում,
- բ) ականառումների և ՊՊՄ-ների անվտանգության կրթում,
- գ) երեխայի կողմից այլ երեխայի կրթում,
- դ) գործընկերների ոչ պաշտոնական կրթում,
- ե) այլ ընթացիկ կրթական նախաձեռնությունների մասեր, ինչպիսիք են
  - (1) Հանրային առողջությունը,
  - (2) Անվտանգությունը տան պայմաններում / վնասվածքների կանխարգելումը,
  - (3) Աշխատանքային տեղամասում ԱԱՀ կրթումը:

Որպես օրինակ, երեխայի կողմից այլ երեխայի կրթումը կարող է ստանդարտ պրակտիկա չլինել շատ երկրների կամ ԱՎԻ կազմակերպությունների համար, և նման ծրագիր իրականացնելիս անհրաժեշտ է սերտորեն համագործակցել ականներ ունեցող համայնքների և իրականացնող գործընկերների հետ՝ մշակույթային տեսանկյունից ընդունելի մեթոդաբանություններ մշակելու նպատակով, որոնք կհամապատասխանեն երեխայի կողմից այլ երեխայի կրթման ընդունված ուղեցույցներին:

---

2. Ականառումների անվտանգության ծրագիր, ՄԱԿԱԾ:

**5.3. Ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցություն**

Ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցությունը վերաբերում է այն համակարգին և ընթացակարգերին, որոնք օգտագործվում են ազգային մարմինների, ականազերծող կազմակերպությունների և համայնքների միջև ականների և ՊՊՄ-ների առկայության և նրանց պոտենցիալ ռիսկի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համար: Այն հնարավորություն է տալիս համայնքներին տեղեկանալ այն մասին, թե երբ է պլանավորվում իրականացնել ականազերծման գործողությունը, առաջադրանքի բնույթի և տևողության, և նշագծված կամ վնասազերծված տարածքների գտնվելու հստակ վայրի մասին:

Բացի այդ, այն հնարավորություն է տալիս համայնքներին տեղեկացնել տեղական իշխանություններին և ականազերծման կազմակերպություններին ականապատ տարածքների տեղի, չափի և ունեցած ազդեցության վերաբերյալ: Այս տեղեկատվությունը կարող է մեծապես նպաստել ականազերծման հետագա գործողությունների պլանավորմանը, ինչպիսիք են տեխնիկական հետազոտությունը, նշագծումը և վնասազերծումը և անհրաժեշտության դեպքում ականառումբերի պայթյուններից հետո կենդանի մնացած անձանց աջակցության ցուցաբերումը: Ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցությունը հաշվետվությունների ներկայացման կարևոր կապ է ստեղծում ծրագրի պլանավորման անձնակազմի համար և թույլ է տալիս մշակել պատշաճ և տեղանքի համար հատուկ ռիսկի նվազեցման ռազմավարություններ: Ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցությունը նպատակ է հետապնդում ապահովել այն, որ ականազերծման ծրագրերը հոգան համայնքի կարիքները և ապահովեն նրա գերակայությունները:

Համայնքների հետ հաղորդակցությունը համայնքներին հնարավորություն է տալիս նաև տեղեկացնել կազմակերպություններին և իշխանություններին ցանկացած խնդիրների կամ բարդությունների վերաբերյալ, որոնք առաջանում են ականազերծման գործողությունների հետևանքով: Այս խնդիրները կարող են լինել աշխատանքի հետ կապված կամ սոցիալական: Դժգոհությունների ներկայացման ուղիները պետք է նախնական այցելությունների ընթացքում քննարկվեն համայնքների հետ՝ նախքան ականազերծման գործողությունների մեկնարկը:

Ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցությունը պետք է իրականացվի ականազերծման գործողություններ իրականացնող բոլոր կազմակերպությունների կողմից: Մյուսնք կարող են լինել ԱՎԻ կազմակերպություններ կամ ականազերծող կազմակերպության ԱՎԻ ուղղությամբ աշխատող անձինք կամ ‘ստորաբաժանումներ’:

Ականների ազդեցությանը ենթարկված բնակիչների հետ ականազերծման գործողությունների վերաբերյալ հաղորդակցությունը կարող է սկսվել ականազերծման գործողություններից բավականին շուտ և ռիսկի գնահատման, տեղեկատվության կառավարման և ռիսկի նվազեցման տեղական ռազմավարությունների մշակման նպատակով կարող է օժանդակել համայնքի մակարդակով ներուժի զարգացմանը: Մա կարող է աջակցել համայնքներին հավաքագրել անհրաժեշտ տեղեկություններ համապատասխան շահառուների վրա ներազդելու և ականազերծման գործողություններն ու այլ օժանդակությանն ուղղված միջամտությունները խթանելու համար:

## 6. Իրականացման համատեքստ

Սահմանափակ շրջանակներով և տևողությամբ ԱՎԻ ծրագրերի դեպքում իրականացման փուլը կարող է լինել համեմատաբար կարճ: Սակայն տարբեր տևողություններով մի քանի փուլերից բաղկացած առավել լայնածավալ ծրագրերի դեպքում իրականացման փուլը կարող է լինել ընդգրկուն և կառավարման համար բարդ: Այն կարող է ներառել կառավարչական պարտավորությունների փոխանցումը միջազգային աշխատակիցներից դեպի տեղական աշխատակիցներ, կարող են փոփոխվել ֆինանսավորման ուղղությունները, և գործունեության իրականացման միջավայրը կարող է փոփոխվել մեկ բաց ընդհարումից կամ մարդասիրական անհետաձգելի միջոցառումից դեպքի առավել կայուն միջավայր, որը կենտրոնացած է զարգացման վրա, պահանջում է ԱՎԻ գործիքների և մեթոդների փոփոխություն՝ ռիսկի տակ գտնվող բնակչության հետ աշխատելու նպատակով:

## 7. Ուղղորդող սկզբունքներ

Ինչպես ներկայացված է 'Ականների ռիսկի վերաբերյալ կրթման կառավարման ուղեցույցում' (ՀԱԳՄՉ 07.11), ԱՎԻ համար չափորոշիչների շարքը հիմնված է ԱՎԻ պահանջների և սկզբունքների ամբողջության վրա, որոնք պետք է դիտարկվեն ծրագրի ընթացքի յուրաքանչյուր փուլում և ներկայացնեն չափորոշիչների ձևաչափի կառուցվածքը: Այս պահանջներից յուրաքանչյուրը հերթականությամբ ներկայացված են ստորև՝ ԱՎԻ ծրագրի պլանավորման համար ուղղություններ տրամադրելու նպատակով:

### 7.1. Շահառուների ներգրավում

Շահառուները և պլանավորման փուլում սահմանված գործողությունները, որոնք ներառում են շահառուներին, պետք է հանդիսանան իրականացման գործընթացի մասը: Եվ իրոք, եթե համայնքը ստանձնել է ծրագրի նկատմամբ սեփականությունը, ապա այն պետք է հանդես գա որպես իրականացնող: Իրականացման գործում նրանց ներգրավվածության մակարդակն ազդեցություն կունենա վերահսկման և գնահատման աշխատանքների իրականացման վրա:

### 7.2. Համակարգում

Իրականացման փուլում կարևոր են ազգային, տարածքային և կազմակերպությունների մակարդակով իրականացվող համակարգման գործողությունները՝ ապահովելու համար կրթական ծրագրի բովանդակության շարունակականությունը, ականներ ունեցող բոլոր տարածքների ներառումը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, քաղված դասերի փորձի փոխանակումը և գործողությունների ոչ անհրաժեշտ կրկնությունից խուսափումը:

ԱԳԱՄ պետք է ԱՎԻ ազգային և/կամ տարածքային համակարգման համար համակարգեր և ընթացակարգեր սահմանի, որոնք պետք է երաշխավորեն ԱՎԻ կազմակերպությունների մասնակցությունը:

### 7.3. Ինտեգրում

Ազգային մարմինները պետք է ապահովեն ԱՎԻ և ականագերծման գործողությունների ինտեգրումն ինչպես ազգային, այնպես էլ կազմակերպությունների մակարդակով՝ նման ինտեգրումը կանոնակարգող Որակի կառավարման (ՈԿ) համակարգերի միջոցով: Օրինակ՝ տես ՀԱԳՄՉ 7.40 կամ 7.41:

### 7.4. Համայնքների մասնակցություն և լիազորություն

Համայնքների մասնակցությունը և լիազորությունները խթանելու համար՝

- ա) կազմակերպությունը պետք է համագործակցի առկա ներուժի հետ, օր.՝ ականառումբերի/ՊՊՄ-ների պայթյուններից հետո կենդանի մնացածների, ֆերմերների խմբերի, կանանց խմբերի, դպրոցների, համայնքային խմբերի, պետության, գյուղերի ականազերծողների և այլոց հետ.
- բ) համայնքային սեփականության գաղափարն անհրաժեշտ է խթանել հենց ծրագրի սկզբից, և մասնավորապես ծրագրի իրականացման փուլում անհրաժեշտ է ապահովել համայնքի ներգրավումը.
- գ) նպատակային համայնքը պետք է մասնակցի ԱՎԻ նյութերի մշակման և դաշտային փորձարկման գործընթացներին:

#### **7.5. Տեղեկությունների կառավարում և փոխանակում**

Իրականացման փուլի ընթացքում կարևոր է, որ ԱՎԻ ծրագիրը շարունակի տեղեկություններ տրամադրել ԱԳԱՄ-ին՝ այն ականազերծման ազգային գործողությունների տեղեկությունների կառավարման համակարգում պաշտոնապես գրանցելու նպատակով: ԱԳԱՄ կամ նրա ներկայացուցիչը պետք է ապահովի ամբողջական տեղեկատվության փոխանակումն ականազերծման կազմակերպությունների և այլ համապատասխան շահառուների միջև: ԱԳԱՄ պետք է ապահովի, որպեսզի ականներ ունեցող համայնքների հետ հաղորդակցությունը տեղի ունենա վնասազերծումից առաջ, նրա ընթացքում և հետո:

#### **7.6. Պատշաճ հասցեականություն**

Իրականացումը պետք է կենտրոնանա կարիքների գնահատման և պլանավորման փուլերում սահմանված նպատակային խմբերի վրա, և նպատակային խմբերը պետք է ծրագրում ներգրավված լինեն որպես ակտիվ մասնակիցներ, այլ ոչ որպես պասիվ ստացողներ:

#### **7.7. Կրթում**

ԱԳԱՄ-ից պետք է պահանջվի մշակել և վերահսկել ԱՎԻ հիմնական կրթակարգի ազգային չափորոշիչները: ԱՎԻ կրթակարգը պետք է համապատասխանի հիմնական ազգային չափորոշիչներին, այնպես, որ տարբեր կազմակերպությունների ԱՎԻ հաղորդագրությունները չհակասեն միմյանց:

Պաշտոնական կրթական համակարգի (այսինքն դպրոցական կրթակարգի) միջոցով ԱՎԻ իրականացումը կարող է որոշակի խնդիրների առջև կանգնել՝ կապված հավաստագրման պահանջների բավարարման, ուսուցիչների շարունակական վերահսկման և նյութերի մշակման հետ: Այս աշխատանքը պետք է մանրակրկիտ կերպով իրականացվի ԱԳԱՄ կամ նրա ներկայացուցչի, այսինքն՝ Կրթության նախարարության կողմից:

Կրթակարգի բովանաղակությունը և հաղորդագրությունները պետք է համաձայնեցվեն և հավասարապես օգտագործվեն ԱՎԻ մեջ ներգրավված բոլոր կազմակերպությունների կողմից: Հաղորդագրությունների տրամադրման և կրթակարգի մեջ կիրառվող մեթոդաբանության շրջանակը և տեսակը պետք է համապատասխանեն նպատակային լսարանի պահանջներին և կարողություններին: Հաղորդագրությունների կիրառման և մշակման սկզբունքները ներառում են՝

- ա) հաղորդագրությունը պետք է հիմնված լինի կարիքների գնահատման վրա և անհրաժեշտության դեպքում վերափոխվի վերահսկումից և գնահատումից հետ.
- բ) հաղորդագրությունները պետք է հիմնված լինեն ականների հետևանքով տեղի ունեցած պատահարների, դրանց հետևանքների և այդ պատահարների բնույթի վերլուծության վրա.

- զ) հաղորդագրությունները պետք է ուղղված լինեն առավել ռիսկային բնակչությանը,
- դ) օգտագործելուց առաջ հաղորդագրությունները պետք է անցնեն դաշտային փորձարկում.
- ե) հաղորդագրությունները պետք է լինեն հնարավորինս դրական և չթողնեն այնպիսի տպավորություն, որ հնարավոր չէ անվտանգ ապրել ականներ կամ ՊՊՄ-ներ ունեցող տարածքներում.
- զ) հաղորդագրությունները պետք է բացատրեն առաջարկվող գործողությունների պատճառները.
- է) տեղական մշակութային և կրոնական յուրահատկություններն արտացոլող պատշաճ հաղորդագրությունների մշակման տեղական համակարգերը պետք է լինեն մատչելի և օգտագործվեն որտեղ հնարավոր է, չնայած անհրաժեշտ է խուսափել ոչ պատշաճ ազդեցություններին ենթարկվելուց:

Մեթոդաբանությունների առավել մանրամասն քննարկումը և նրանց ընտրությունը ենթակա են հետագա ԱԳՏՆ:

### **7.8. Վերապատրաստում**

ԱՎԻ ծրագրերը պետք է նպատակաուղղված լինեն նպատակային բնակչությանն ականների և ՊՊՄ ռիսկերի բնույթի վերաբերյալ կրթելուն և ռիսկերի ենթարկված բոլոր անձանց կողմից անվտանգ վարքագիծ վարել խթանելուն, ներառյալ բուժաշխատողներին և ականներ ունեցող տարածքներում կամ համայնքներում աշխատող այլ անձանց: Կազմակերպությունները պետք է իրենց ԱՎԻ աշխատակիցներին և օժանդակ անձնակազմին, ինչպիսիք են անվտանգության աշխատակիցները և վարորդները, իսկ անհրաժեշտության դեպքում զարգացման ոլորտի այլ աշխատակիցներին համապատասխան անվտանգության դասընթացներ տրամադրեն, ներառյալ ականառումների անվտանգության դասընթացները:

ԱՎԻ և անվտանգության վերաբերյալ հիմնական դասընթացները պետք է ստանդարտացվեն դրանք իրականացնող կազմակերպությունների միջև և կրթական միջոցառումները պետք է փաստաթղթավորվեն, վերահսկվեն և գնահատվեն:

## **8. Պարտավորություններ**

Հստակ դերերի և պարտականությունների սահմանված չլինելու դեպքում ընթերցողը պետք է հղում կատարի ՀԱԳՄՉ 07.11-ին (*ԱՎԻ կառավարման ուղեցույց*):

### **8.1. Միացյալ ազգերի կազմակերպություն**

ՄԱԿ գործակալությունները պետք է օժանդակեն ԱԳԱՄ՝ ԱՎԻ ծրագրերի իրականացման համար ստանդարտների մշակման և պահպանման գործում:

Որոշ դեպքերում և որոշակի պահերին ԱՆ կարող է ստանձնել ԱԳԱՄ որոշ կամ բոլոր պարտականությունները և իրականացնել նրա որոշ կամ բոլոր գործառույթները, ներառյալ ԱՎԻ իրականացման համակարգումը և վերահսկումը:

### **8.2. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)**

ԱԳԱՄ կամ նրա անունից գործող կազմակերպությունը պետք է՝

- ա) ապահովի ԱՎԻ ծրագրի իրականացման համապատասխանությունը գնահատման և պլանավորման փուլերում սահմանված կարիքների և գերակայությունների հետ.
- բ) պարբերաբար նորացնի ականագերծման գործողությունների ազգային ծրագիրը՝ էլնելով ԱՎԻ ծրագրերի վերահսկման և գնահատման արդյունքում ստացված հետադարձ կապից և այլ հարակից միջոցառումներից.
- գ) ապահովի վերահսկման մեխանիզմի առկայությունը և կիրառումն ազգային մակարդակով ԱՎԻ ծրագրերի արդյունավետ իրականացումը երաշխավորելու նպատակով.
- դ) վերահսկի ականներ ունեցող համայնքների և նպատակային խմբերի հասանելիությունը.
- ե) անհրաժեշտության դեպքում տեխնիկական աջակցություն ցուցաբերի.
- զ) ներգրավի ներքին և արտաքին միջոցներ (անձնակազմ, լրատվամիջոցներ, տեխնիկական աջակցություն) իրականացման ծրագրերին աջակցելու համար.
- է) նպաստի դպրոցների և այլ հասարակական հաստատությունների հետ կապի հաստատմանը ? հնարավորության դեպքում նպատակային բնակչության հետ հաղորդակցությանը:

ԱՎԻ ծրագրերի իրականացումը պետք է համակարգվի ԱԳԱՄ կամ նրա անունից գործող կազմակերպության կողմից: Որտեղ հնարավոր է, ԱԳԱՄ պետք է.

- ա) օժանդակի կազմակերպություններին այլ պետական գործակալությունների և ոլորտների հետ իրենց գործունեությունը համակարգելու հարցում,
- բ) պլանավորման ընթացքում ինչպես ազգային, այնպես էլ միջազգային իրականացնող գործընկերների մասնակցությունը խթանելու ժամանակ իրականացնի համակարգման աշխատանքներ,
- գ) ապահովի այն, որ ԱՎԻ կազմի ազգային, տարածքային և կազմակերպությունների մակարդակով ականագերծման գործողությունների ազգային ծրագրի գործառնական պլանավորման մասը,
- դ) ապահովի ամբողջական տեղեկատվության փոխանակումն ականագերծման կազմակերպությունների և այլ համապատասխան շահառուների միջև:

### 8.3. ԱՎԻ կազմակերպություն

ԱՎԻ իրականացնող կազմակերպությունը՝

- ա) պետք է իրազեկ պահի շահառուներին (այսինքն գործընկեր կազմակերպություններին, այլ ներգրավված գործակալություններին, համայնքներին) և ստանա իրականացման փոփոխությունների հետ կապված նրանց համաձայնությունը.
- բ) պետք է ապահովի ԱՎԻ ծրագրերի իրականացման ճկունությունը.
- գ) պետք է ԱՎԻ ծրագրերն իրականացնի ականագերծման գործողությունների ազգային ծրագրում բերված սկզբունքների և գերակայությունների համաձայն:

---

**8.4. Դոնորներ**

Դոնոր կազմակերպությունը պետք է .

- ա) ապահովի ծրագրի ճկունությունը՝ ընդունելով այն, որ ծրագրի իրականացումը որոշ իրավիճակներում կարող է տարբերվել նախապես կազմված պլաններից,
- բ) իրականացման ընթացքում ապահովի վերահսկումը՝ ֆինանսավորման համաձայնագրերում բերված կարգով: Այս փուլում վերահսկումը կարող է դիտարկել կազմակերպությունների համապատասխանությունը ՀԱԳՄՉ և ազգային պլաններին ու չափորոշիչներին, և ականագերծման գործողությունների շրջանակներում ու մարդասիրական և զարգացման այլ գործակալությունների հետ պատշաճ համակարգումը և ինտեգրումը,
- գ) պատշաճ ֆինանսավորում և աջակցություն տրամադրելու միջոցով օժանդակի ականագերծման գործողությունների ազգային ծրագրի իրականացմանը:

## Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրատարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Սակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան.

- ա) ՀԱԳՄՉ 04.10 Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հապավումներ;
- բ) ՀԱԳՄՉ 07.11 Ականների վտանգի մասին իրազեկման կառավարման ուղեցույց;
- գ) ՀԱԳՄՉ 07.40 Ականազերծող կազմակերպությունների մոնիտորինգ;
- դ) ՀԱԳՄՉ 07.41 Ականների վտանգի մասին իրազեկման ծրագրերի և նախագծերի մոնիտորինգ;
- ե) ՀԱԳՄՉ 08.50 Ականների ռիսկի գնահատման համար տվյալների հավաքագրում և կարիքների գնահատում;
- զ) ՀԱԳՄՉ 12.10 Ականների ռիսկի վերաբերյալ կրթական ծրագրերի և նախագծերի պլանավորում:

Պետք է օգտագործվի սույն հղումների վերջին տարբերակը/հրատարակությունը: GICHD պահպանում է սույն չափորոշիչում օգտագործվող բոլոր հղումների օրինակները: ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղեցույցների և հղումների վերջին տարբերակի/հրատարակության ռեգիստրը վարվում է GICHD կողմից և առկա է ՀԱԳՄՉ կայքէջում (<http://www.mineactionstandards.org/>): ԱԳԱՄ, գործատուները և այլ հետաքրքրված մարմինները և կազմակերպությունները պետք է ձեռք բերեն այդ օրինակները նախքան ականազերծման գործողությունների ծրագրերի մեկնարկը:



## **Հավելված Բ** **(Տեղեկատվական)** **Տերմիններ, սահմանումներ և հապավումներ**

### **B.1.**

#### **Համայնքի հետ կապի ապահովում**

##### **Ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովում**

Կապի ստեղծում ականներ/ՊՊՄ տարածքներ ունեցող համայնքների հետ, որի նպատակն է տեղեկություններ փոխանակել ականների/ՊՊՄ առկայության և ազդեցության վերաբերյալ, հաշվետվական կապ ստեղծել ականազերծման գործողությունների ծրագրի հետ և մշակել ռիսկի կրճատման ռազմավարություններ: Համայնքի հետ կապի նպատակն է երաշխավորել, որ ականազերծման գործողությունների ծրագիրը պլանավորելիս, իրականացնելիս և մոնիտորինգ իրականացնելիս համայնքի կարիքները և գերակայությունները առաջին տեղում լինեն:

Նշում. Համայնքի հետ կապը հիմնված է տեղեկությունների փոխանակման վրա և մասնակից է դարձնում համայնքներին որոշումների կայացման գործընթացին (ականազերծումից առաջ, դրա ընթացքում և հետո)՝ ականազերծման գործողությունները ըստ գերակայությունների սահմանելու համար: Արդյունքում ականազերծման գործողությունների ծրագրերը լինում են ներառական, համայնքի կարիքներին միտված և ապահովում են համայնքի բոլոր հատվածների առավելագույն մասնակցությունը: Վերջինս ներառում է նախագծերի համատեղ պլանավորումը, իրականացումը, մոնիտորինգը և գնահատումը:

Նշում. Համայնքի հետ կապի նպատակներից մեկը անվտանգության միջանկյալ ռազմավարության համատեղ մշակումն է՝ խրախուսելու համար անհատական և համայնքային վարքագծի փոփոխությունը: Ռազմավարության նպատակն է կրճատել անհատների և համայնքի վրա ականների/ՊՊՄ ազդեցությունը մինչև վտանգը լիովին վերացվի:

### **B.2.**

#### **Ականազերծում**

##### **Մարդասիրական ականազերծում**

Գործողություններ, որոնք տանում են դեպի ականների և ՊՊՄ-ների հեռացումը, ներառյալ տեխնիկական հետազոտության, քարտեզագրման, վնասազերծման, նշագման, հետմաքրման փաստաթղթավորման, ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցության և վնասազերծված տարածքների հանձնման իրականացումը: Ականազերծումը կարող է իրականացվել տարբեր տեսակի կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են ՀԿ-ները, առևտրային կազմակերպությունները, ականազերծման գործողությունների ազգային խմբերը կամ ռազմական միավորները: Ականազերծումը կարող է լինել հիմնված անհետաձգելի իրավիճակների վրա կամ կապված զարգացման գործողությունների հետ:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում ականների և ՊՊՄ-ների վնասազերծումը համարվում է ականազերծման գործընթացի միայն մեկ մասը:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում ականազերծումը համարվում է ականազերծման գործողությունների միայն մեկ բաղադրիչ:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում ականազերծում և մարդասիրական ականազերծում տերմինները փոխադարձաբար փոխարինելի են:

### **B.3.**

#### **Կրթում**

Ժամանակի ընթացքում գիտելիքների (փաստերի, մտքերի, ճշմարտությունների կամ սկզբունքների իմացությունը կամ տիրապետումը), մոտեցումների և պրակտիկաների փոխանցումը և ստացումը ուսուցանման և սովորելու միջոցով: [Օքսֆորդի անգլերեն լեզվի կրճատ բառարան]

**B.4.**

**Պատերազմի պայթուցիկ մնացորդներ (ՊՊՄ)**

Չպայթեցված զինամթերք (ՉԶ) և Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊԶ): (ՄՈԶ արձանագրություն V):

**B.5.**

**Ուղեցույց**

ՀԱԳՄՉ ուղեցույցը ներկայացնում է ընդհանուր կանոնները, սկզբունքները, խորհուրդները և տեղեկությունները:

**B.6.**

**Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ)**

Միջազգային հանրության անունից ՄԱԿ կողմից մշակված փաստաթուղթ, որը նպատակ է հետապնդում բարելավել ականագերծման գործողությունների անվտանգությունը և արդյունավետությունը՝ մշակելով սկզբունքներ և որոշ դեպքերում սահմանելով միջազգային պահանջները և առանձնահատկությունները:

Նշում՝ Նրանք ներկայացնում են հղումների կառուցվածքը, որը խթանում է և որոշ դեպքերում պահանջում է ականագերծման ծրագրերի հովանավորներից և կառավարիչներից ապահովել և ցուցաբերել արդյունավետության և անվտանգության համաձայնեցված մակարդակները:

Նշում՝ Նրանք առաջարկում են ընդհանուր լեզու և տվյալների հետ աշխատանքի ձևերն ու կանոնները, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել կարևոր տեղեկությունների ազատ փոխանակումը: Տեղեկությունների այս փոխանակումը նպաստում է այլ ծրագրերին ու նախագծերին և օժանդակում է ռեսուրսների ներգրավմանը, գերակայությունների սահմանմանը և կառավարմանը:

**B.7.**

**Ական**

զինամթերք, որը նախատեսված է հողի կամ այլ մակերևույթի տակ, վրա կամ մոտ տեղադրվելու և անձի կամ մեքենայի ներկայությունից, մոտ գտնվելուց կամ նրանց հետ շփումից պայթելու նպատակով [MBT]:

**B.8.**

**Ականների հետևանքով տեղի ունեցած պատահար**

Պատահար, որը տեղի է ունեցել ականագերծման տարածքից դուրս և ներառում է ական կամ ՊՊՄ (տես նաև ականագերծման պատահար):

**B.9.**

**Ականագերծման գործողություն**

միջոցառումներ, որոնք ուղղված են ականների և ՊՊՄ-ների սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի հետ կապված ազդեցությունների նվազեցմանը:

Նշում՝ Ականազերծման գործողությունը չի վերաբերում միայն ականների հեռացմանը, այլ ուղղված է նաև մարդկանց և հասարակություններին և ականների ու ՊՊՄ-ների կողմից նրանց վրա ունեցած ազդեցությանը: Ականազերծման գործողության նպատակն է նվազեցնել ականների և ՊՊՄ-ների ներկայացրած ռիսկը մինչ այնպիսի մակարդակ, որի դեպքում մարդիկ կկարողանան անվտանգ ապրել, իսկ տնտեսական, սոցիալական և առողջապահական ոլորտների զարգացումը կարող է զերծ լինել ականների և ՊՊՄ-ների կողմից առաջացրած սահմանափակումներից և հնարավոր կլինի հոգալ տուժածների կարիքները: Ականազերծման գործողությունը ներառում է միմյանց փոխլրացնող գործողությունների հինգ խմբեր.

- ա) ԱՎԻ,
- բ) մարդասիրական ականազերծում, այսինքն ականների և ՊՊՄ-ների հետազոտում, քարտեզագրում, նշագծում և վնասազերծում,
- գ) տուժածների օգնություն, ներառյալ վերականգնումը և վերաինտեգրումը,
- դ) պահուստային զինամթերքի ոչնչացումը,
- ե) հակահետևակային ականների օգտագործման դեմ քարոզարշավները:

Նշում՝ Ականազերծման գործողությունների այս հինգ բաղադրիչներին օժանդակելու նպատակով անհրաժեշտ են մի շարք այլ միջոցառումներ, ներառյալ՝ գնահատումը և պլանավորումը, ռեսուրսների ներգրավումը և գերակայությունների որոշումը, տեղեկությունների կառավարումը, մարդկային ունակությունների զարգացումը և կառավարման թեմաներով կրթումը, ՈԿ և արդյունավետ, պատշաճ ու անվտանգ սարքավորումների կիրառումը:

#### **B.10.**

##### **Ականների վերաբերյալ կրթում**

Տես Ականների վտանգի մասին իրազեկում (ԱՎԻ):

#### **B.11.**

##### **Ականների ռիսկ**

անձանց, սեփականությանը կամ շրջակա միջավայրին հասցված վնասի հավանականությունը և ուժգնությունը, որը տեղի է ունենում ականի կամ ՊՊՄ պատահական պայթյունից: [Հարմարեցված է ISO Ուղեցույց 51:1999(E)-ից]

#### **B.12.**

##### **Ականների վտանգի մասին իրազեկում (ԱՎԻ)**

Միջոցառումներ, որոնք նպատակ են հետապնդում նվազեցնել ականների/ՊՊՄ-ների պատճառով առաջացած վնասները՝ բարելավելով իրազեկության մակարդակը և խթանելով վարքագծի փոփոխությունը, ներառյալ հանրության համար տեղեկությունների տարածումը, կրթումն ու վերապատրաստումը և ականազերծման գործողությունների վերաբերյալ հանրության հետ հաղորդակցությունը:

#### **B.13.**

##### **Ականների ռիսկի նվազեցում**

Գործողություններ, որոնք նվազեցնում են անձանց, սեփականությանը կամ շրջակա միջավայրին հասցված վնասի հավանականությունը և/կամ ուժգնությունը: [Հարմարեցված է ISO Ուղեցույց 51:1999(E)-ից]: Ականների ռիսկի նվազեցումը կարող է իրականացվել այնպիսի ֆիզիկական միջոցառումների միջոցով, ինչպիսիք են վնասազերծումը, ցանկապատումը կամ նշագծումը, կամ ԱՎԻ միջոցով խթանված վարքագծի փոփոխության միջոցով:

#### **B.14.**

### **ԱՎԻ կազմակերպություն**

Ցանկացած կազմակերպություն, ներառյալ պետական, հասարակական կամ քաղաքացիական կազմակերպություններ (օր.՝ կանանց միավորումները, երիտասարդական կազմակերպությունները, կարմիր խաչի և կարմիր մահիկի կազմակերպությունը, առևտրային միավորումներ և ռազմական խմբեր (ներառյալ խաղաղություն պաշտպանող ուժեր), որոնք պատասխանատու են ԱՎԻ ծրագրերի կամ առաջադրանքների իրականացման համար: ԱՎԻ կազմակերպությունը կարող է հանդես գալ որպես հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ: 'ԱՎԻ ստորաբաժանում' տերմինը վերաբերում է կազմակերպության առանձին անվանում ունեցող մի բաղադրիչին, որը հավաստագրված է մեկ կամ մի քանի հանձնարարված ԱՎԻ միջոցառումներ իրականացնելու համար, ինչպիսիք են հանրային տեղեկությունների տարածման ծրագրի, դպրոցներում իրականացվող կրթական ծրագրի կամ հակաակնային գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցման ծրագրերի գնահատումը:

### **B.15.**

#### **ԱՎԻ գործընկեր**

Ականներ ունեցող համայնքի ներսում մի հաստատություն կամ գործակալ, որը կարող է համագործակցել ԱՎԻ կազմակերպության հետ ԱՎԻ ծրագրերին աջակցելու, դրանք մշակելու և իրականացնելու ուղղությամբ:

### **B.16.**

#### **Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)**

Ականներ ունեցող բոլոր այն երկրների պետական վարչությունները, կազմակերպությունները կամ հաստատությունները, որոնք պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները:

'Նշում' Շատ դեպքերում ԱԳԱԿ կամ նրան հավասարազոր մարմինը կարող է գործել որպես ԱԳԱՄ կամ նրա անունից:

'Նշում' Որոշ իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ կամ այլ ճանաչված միջազգային մարմնի համար կարող է անհրաժեշտ և պատշաճ լինել ստանձնել ԱԳԱՄ որոշ կամ բոլոր պարտականությունները և իրականացնել որոշ կամ բոլոր գործառնությունները:

### **B.17.**

#### **Հանրային տեղեկատվության տարածում**

Ականների և ՊՊՄ իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն, որն օգտագործվում է բնակչությանը իրազեկելու կամ նոր տեղեկություններ տրամադրելու համար: Նման տեղեկատվությունը կարող է կենտրոնանալ կոնկրետ խնդիրների վրա, ինչպիսիք են ականներ արգելող օրենսդրությունը կամ կարող է օգտագործվել ականազերծման ծրագրերի իրականացման ընթացքում հանրային օժանդակությունը խթանելու նպատակով: Նման ծրագրերը սովորաբար ներառում են ռիսկի նվազեցման հաղորդագրությունները, սակայն կարող են նաև օգտագործվել ականազերծման գործողությունների ազգային քաղաքականությունն արտացոլելու նպատակով:

### **B.18.**

#### **Ռիսկ**

Վնասի միջադեպ տեղի ունենալու հավանականության և այդ վնասի մակարդակի համադրություն: [ISO Ուղենիշ 51:1999(E)]

### **B.19.**

#### **Կենդանի մնացած անձինք (ակնառումների/ՊՊՄ-ների ազդեցությունից հետո)**

Անհատներ կամ մարդկանց խմբեր, որոնք կրել են ֆիզիկական, զգացմունքային կամ հոգեբանական վնասներ, տնտեսական կորուստներ կամ իրենց հիմնական իրավունքների զգալի ոտնահարում ականների օգտագործման կամ ՊՊՄ-ների առկայության, կիրառման կամ դրանց վերաբերյալ կանոնակարգերի բացթողումների հետևանքով: Ականների/ՊՊՄ-ների ազդեցությունից հետո կենդանի մնացածների կամ տուժածների թվին են դասվում ուղղակիորեն ազդեցության ենթարկված անձինք, նրանց ընտանիքները և ականառումներ ու ՊՊՄ-ներ ունեցող համայնքները:

**B.20.**

**Չպայթած զինամթերք (ՉՊԶ)**

ՊԶ, որը լիցքավորվել, համակցվել, հրահանները քաշվել կամ այլապես նախապատրաստվել է օգտագործմանը կամ օգտագործվել է: Այն կարող է կրակված լինել, զցված, մեկնարկված կամ հրահանը քաշված, սակայն դեռևս մնալ չպայթած անսարքության, տեսակի կամ էլ մեկ այլ պատճառով:

**B.21.**

**ՄԱԿ ականազերծման կազմակերպություն (ՄԱԿԱՕ)**

ՄԱԿ կենտրոնական մարմին, որը զբաղվում է ականների հետ կապված բոլոր գործողություններով:

Նշում՝ ՄԱԿԱՕ հանդիսանում է ՄԱԿ քարտուղարության կառուցվածքում գործող գրասենյակ, որը պատասխանատվություն է կրում միջազգային հանրության արջև ՀԱԳՄՉ մշակման և պահպանման համար:

Նշում՝ UNICEF կենտրոնական մարմինն է, որը ՄԱԿԱՕ ընդհանուր համակարգման ուղեցույցների շրջանակներում իրականացնում է ԱԿԻ:

**B.22.**

**Տուժած**

Անձ, որը վնասներ է կրել ականների կամ ՊՊՄ-ների պայթյունների հետևանքով:

Նշում՝ Տուժածներին աջակցություն ցուցաբերելու համատեքստում՝ տուժած տերմինը կարող է ներառել ականների/ՊՊՄ-ների դժբախտ պատահարների տուժածներից կախվածություն ունեցող անձանց՝ այդպիսով ունենալով առավել լայն իմաստ, քան կենդանի մնացածները:

**B.23.**

**Գյուղերի ականազերծում**

Սովորաբար տեղական բնակչության կողմից, իրենց կամ իրենց անմիջական համայնքի անունից ականների և/կամ ՊՊՄ-ների վնասազերծման և վտանգավոր տարածքների նշագծման ուղղությամբ անկախ իրականացվող աշխատանքներ: Հաճախ ներկայացվելով որպես *անկախ նախաձեռնություն կամ ինքնակամ ականազերծում*՝ գյուղերի վնասազերծումը սովորաբար իրականացվում է ականազերծման գործողությունների պաշտոնական միջոցառումներից անկախ կամ նրանց զուգահեռ, ինչպիսիք են ռազմական ուժերի կողմից կատարվող *ականազերծման գործողությունները* կամ *մարդասիրական ականազերծումը*, որը կարող է օժանդակվել ՄԱԿ, միջազգային կամ ազգային հասարակական կազմակերպությունների, մասնավոր ձեռնարկությունների և կառավարության և այլ աղբյուրների կողմից:

## Փոփոխությունների գրանցում

### ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական հանգամանքներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցումը, մինչև նոր վերանայում իրականացվի: ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխությունները այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում՝ [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org):

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ
1	Դեկտեմբերի 1, 2004թ.	1. Ձևաչափի փոփոխություններ 2. Տեքստի աննշան խմբագրական փոփոխություններ: 3. Որտեղ անհրաժեշտ է տերմինների, սահմանումների և հապավումների փոփոխություններ՝ ՀԱԳՄՉ 04.10-ի հետ սույն ՀԱԳՄՉ համապատասխանությունն ապահովելու նպատակով:
2	Հուլիսի 23, 2005թ.	1. Հավելված Բ-ում՝ Ականների ռիսկի վերաբերյալ կրթման (ԱՎԲ)՝ սահմանման փոփոխություն՝ ՀԱԳՄՉ 04.10-ին համապատասխանելու նպատակով:
3	Օգոստոսի 1, 2006թ.	1. Նախաբանի առաջին և երկրորդ պարբերությունների աննշան փոփոխություններ/լրացումներ: 2. Ականներ և ՊՊՄ տերմինի ներառում: 3. Ամբողջ ՀԱԳՄՉ-ից՝ սպառնալիք՝ տերմինի հեռացում: 4. Կետ 5.3-ում նոր երրորդ պարբերության ավելացում: